ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 սեպտեմբերի 2026 թվականի № 337-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 27-ի № 1224 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* № 355-Ա որոշման № 2 հավելվածի 6-րդ կետում ***«Նարեկ Հարությունյան»*** բառերը փոխարինել ***«Գուրգեն Հակոբյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց», «Մարմարիկի միջնակարգ դպրոց», «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց», «Արտավազի միջնակարգ դպրոց», «Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» և «Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհուրդներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 1
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 սեպտեմբերի 2026 թվականի № 338-Ա

ԼԱՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԹԵՂԵՆԻՔԻ Վ. ՋԻՆԻՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22.1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին փոխարինողի մոտ 2026 թվականի սեպտեմբերի 1-ին *Լաուրիկ Գրիգորյանի* հետ անցկացրած հարցազրույցը՝ **որոշում եմ.**

1. ***Լաուրիկ Սարիբեկի Գրիգորյանին*** 2026 թվականի սեպտեմբերի 4-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 3
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 սեպտեմբերի 2026 թվականի № 340-Ա

ՎԵՆԵՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Վեներա Հովհաննիսյանի* 2026 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Վեներա Հովհաննիսյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 10-ից 24-ը ներառյալ:

2. ***Վեներա Հովհաննիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Մահիտր Սարգսյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ) **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026 թվականի սեպտեմբերի 3
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 սեպտեմբերի 2026 թվականի № 341-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԹԻՎ 514 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քասախ համայնքի բնակիչ *Ռուման Ալբերտի Գազարովի* 2026 թվականի հուլիսի 05-ի և սեպտեմբերի 03-ի դիմումները և կից փաստաթղթերը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի հուլիսի 28-ի *«Քասախ համայնքի բնակիչ Մարինա Ալբերտի Ղազարովայի երեք անձից բաղկացած ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով բնակարան հատկացնելու մասին»* թիվ 514 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 3-րդ կետի «գ» ենթակետում ***«Ղազարով»*** բառը փոխարինել ***«Գազարով»*** բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 3
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 սեպտեմբերի 2026 թվականի № 342-Ա

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2026 թվականի մարտի 18-ի № 99-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 3-ի № Ե-5989 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Հայկ Մկրտչյանին* 2026 թվականի սեպտեմբերի 4-ին, մեկ օրով գործուղել քաղաք Աբովյան՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 4
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 սեպտեմբերի 2026 թվականի № 343-Ա

ԱՐՄԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, հիմք ընդունելով *Արմինե Գևորգյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ի № 33 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արտավազի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Արմինե Գևորգյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 9-ից 30-ը ներառյալ:

2. ***Արմինե Գևորգյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արտավազի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Հերմինե Նալթակյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 4
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2026 թվականի № 344-Ա

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Հարություն Ծատուրյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 4-ի № 0036 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Հարություն Ծատուրյանին*** տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2026 թվականի սեպտեմբերի 22-ից 26-ը ներառյալ, հինգ օր:

2. ***Հարություն Ծատուրյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Նորիկ Տերտերյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 7
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 սեպտեմբերի 2026 թվականի № 345-Ա

ՆՈՒՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Նունե Եղիազարյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 04-ի № 17 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Նունե Եղիազարյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 14-ը ներառյալ:

2. ***Նունե Եղիազարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Վահագն Ղարիբյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Վահագն Ղարիբյանին*** և «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Նունե Խաչատրյանին*** ապահովել «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Նունե Խաչատրյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 7
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 սեպտեմբերի 2026 թվականի № 346-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի № 1194 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության *2025* թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթից *2026* թվականի պետական բյուջե շահութաբաժնի վճարման չափը սահմանել ***228 000*** ՀՀ դրամ:

2. Շահութաբաժնի գծով ընկերության վերը նշված պարտավորությունը սահմանված կարգով *(ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հոկտեմբերի 1-ը)* ենթակա են վճարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի *900005200416* հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 8
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 սեպտեմբերի 2026 թվականի № 348-Ա

ԳՆԵԼ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Գնել Հակոբյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Հ. Թումանյանի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Գնել Հակոբյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 8-ից հոկտեմբերի 13-ը ներառյալ:

2. ***Գնել Հակոբյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Հ. Թումանյանի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սուսաննա Մեսրոպյանի*** *(համաձայնությամբ)* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ) Վ. ՓԱՐՍԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 8
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 սեպտեմբերի 2026 թվականի № 350-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ, ՆԱԻՐԻ ԵՎ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ, 2.2-րդ մասերի, 127-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի № 67-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ***Աբովյան, Նաիրի*** և ***Նոր Հաճըն*** համայնքներում ***2026 թվականի դեկտեմբերի 13-ին*** նշանակել և անցկացնել համայնքների ավագանիների համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Աբովյան, Նաիրի* և *Նոր Հաճըն* համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ) Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 10
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի № 351-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և «Տարածքային կառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Ծաղկաձոր, Չարենցավան, Եղվարդ և Աբովյան համայնքների բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով ինը քաղաքացիներին հատկացնել՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն՝ հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 11
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 11-ի № 351-Ա որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հ/հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Անի Սախոյան	Հրազդան համայնք, Սպանդարյան, 1 փողոց, 38 բնակարան	20 000	
2	Գնել Համբարձումյան	Հրազդան համայնք, Միկրոշրջան, 227 շենք, 38 բնակարան	40 000	
3	Դոնիկ Ղարիբյան	Ծաղկաձոր համայնք, գ. Հանքավան, Խոտոր ջրի հանրակացարան, 1 փողոց, 1 բնակարան	20 000	
4	Զաբելա Սարգսյան	Եղվարդ համայնք, գ. Պռոշյան, Գ. Զոհրապի փողոց, 3 նրբանցք, 17/1 բնակարան	20 000	
5	Մայիս Հայրապետյան	Հրազդան համայնք, գ. Լեռնանիստ, 1 փողոց, 4 փակուղի, 2 բնակարան	20 000	
6	Մարինե Նիկողոսյան	Աբովյան համայնք, Միկրոշրջան, 8 փողոց, 17 բնակարան	20 000	
7	Մելինե Նալբանդյան	Հրազդան համայնք, Շահումյան փողոց, 22 փողոց, 22 բնակարան	20 000	
8	Միեր Բաղդասարյան	Եղվարդ համայնք, գ. Զովունի, 38 փողոց, 19 շենք, 2 բնակարան	20 000	
9	Վարուժան Խաչատրյան	Չարենցավան համայնք, գ. Ֆանտան, 1 փողոց, 5 շենք, 2 բնակարան	20 000	
Ընդամենը			**200 000**	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի № 352-Ա

ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասի և հիմք ընդունելով *Սյուխան Բաղդասարյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 11-ի № Ն/1150-2026 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Սյուխան Բաղդասարյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից հինգ աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 14-ից 18-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 11
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2026 թվականի № 353-Ա

ԱՆՆԱ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Աննա Սերոբյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 18-ի № 27 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Աննա Սերոբյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ 12 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 14-ը ներառյալ:

2. ***Աննա Սերոբյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Մենիկ Հովհաննիսյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Մենիկ Հովհաննիսյանին*** և «Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սարա Հովհաննիսյանին*** ապահովել «Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Սարա Հովհաննիսյանի)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԵՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 22
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2026 թվականի № 354-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23 -Ի ԹԻՎ 426 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քասախ համայնքի բնակիչ *Կարեն Համլետի Բալասանյանի* 2026 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը և կից փաստաթղթերը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի հուլիսի 23-ի *«Քասախ համայնքի բնակիչ Համլետ Ջավենի Բալասանյանի չորս անձից բաղկացած ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով բնակարան հատկացնելու մասին»* թիվ 426 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 4-րդ պարբերության ***«3»*** թիվը փոխարինել ***«4»*** թվով:

2) 3-րդ պարբերություն «ա» ենթակետում ***«Բալասանյան Համլետ»*** բառերից հետո լրացնել ***«Ջավենի»*** բառը:

3) 3-րդ պարբերություն «բ» ենթակետում ***«Սարգսյան Կարինե»*** բառերից հետո լրացնել ***«Գևանդի»*** բառը:

4) 3-րդ պարբերություն «գ» ենթակետում ***«Բալասանյան Կարեն»*** բառերից հետո լրացնել ***«Համլետի»*** բառը:

5) 3-րդ պարբերություն «դ» ենթակետում ***«երիի»*** բառը փոխարինել ***«էրիի»*** բառով, և լրացնել ***«Համլետի»*** բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 22
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2026 թվականի № 355-Ա

ՋՈՅԱ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, *Ջոյա Սաֆարյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 18-ի № 84 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ալափարսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Ջոյա Սաֆարյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից չորս աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 22-ից 25-ը ներառյալ:

2. ***Ջոյա Սաֆարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ալափարսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն ***Լիլիա Մանուկյանի*** *(համաձայնությամբ)* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ) Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 22
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի № 356-Ա

ՍՏԵՓԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԳԱՌՆԻԻ Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22.1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին փոխարինողի մոտ 2026 թվականի սեպտեմբերի 18-ին *Սրեփան Գևորգյանի* հետ անցկացրած հարցազրույցը՝ **որոշում եմ.**

1. ***Սրեփան Վահրամի Գևորգյանին*** 2026 թվականի սեպտեմբերի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գառնիի Ա. Հակոբյանի անվան № 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գառնիի Ա. Հակոբյանի անվան № 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ) **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026 թվականի սեպտեմբերի 23
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի № 357-Ա

ԳԱՐՈՒՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՀՐԱԶԴԱՆԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22.1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին փոխարինողի մոտ 2026 թվականի սեպտեմբերի 18-ին *Գարունիկ Գրիգորյանի* հետ անցկացրած հարցազրույցը՝ **որոշում եմ.**

1. ***Գարունիկ Աշոտի Գրիգորյանին*** 2026 թվականի սեպտեմբերի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Ա. Իսահակյանի անվան № 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Ա. Իսահակյանի անվան № 9 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ) **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026 թվականի սեպտեմբերի 23
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2026 թվականի № 358-Ա

ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամայիս Հայրապետյանի անվան Ջովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2026 թվականի սեպտեմբերի 22-ի № 31 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամայիս Հայրապետյանի անվան Ջովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անահիտ Ավետիսյանի*** ժամանակավոր անաշխատունակության պատճառով՝ կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Ռուզաննա Բաղդասարյանի*** վրա, մինչև տնօրենի աշխատանքի ներկայանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է *2026 թվականի սեպտեմբերի 23-ից* ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ) **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2026 թվականի սեպտեմբերի 24
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2026 թվականի № 359-Ա

2026 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 18-ի № 502-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի ծառայության *2026 թվականի տարեկան ծրագրի չորրորդ եռամսյակի* աշխատանքային կատարողականն ապահովելու նպատակով իրականացվող աուդիտորական առաջադրանքները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածում նշված ներքին աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական առաջադրանքների իրականացումը վերապահել ներքին աուդիտի ծառայության աշխատանքային խմբի անդամներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԵՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 29
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 29-ի № 359-Ա որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

Ներքին աուդիտի ենթակա միավորներ 2026 թվական			
Չորրորդ եռամսյակ			
Հ/հ	Անվանումը	Հասցեն	Աուդիտի տեսակը
1	«Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Արագյուղ	Համապատասխանության, կատարողականի և ֆինանսական աուդիտ
2	«Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերություն	ք. Նոր Հաճըն	Համապատասխանության, կատարողականի և ֆինանսական աուդիտ
3	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչություն	ք. Հրազդան	Համապատասխանության, կատարողականի և ֆինանսական աուդիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 360-Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման № 1 հավելվածի 10-րդ կետի, հիմք ընդունելով *Ռուզաննա Ավալյանի* 2026 թվականի սեպտեմբերի 24-ի № 19 դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Ռուզաննա Իսրայելի Ավալյանին*** 2026 թվականի հոկտեմբերի 1-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պաշտոնից:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով *(տնօրենի թափուր պաշտոնում)* պաշտոնի նշանակումը՝ 2026 թվականի հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տեղեկատվական համակարգի ադմինիստրատոր ***Լիլիթ Արմենի Աղամալյանի***, իսկ սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Նունե Հակոբի Խաչատրյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)



Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 361-Ա

ՀԵՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒԳԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 226-րդ հոդվածի և հիմք ընդունելով *Հերմինե Ղազարյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 25-ի № 26.79 գրավոր բացատրությունը՝ **որոշում եմ.**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զրառատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Հերմինե Վաչիկի Ղազարյանի*** նկատմամբ կիրառել ***«նկատողություն»*** կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 362-Ա

ԱՆՈՒՇ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով *Անուշ Թադևոսյանի*՝ 2026 թվականի սեպտեմբեր 28-ի № 29 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անուշ Թադևոսյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 5-ից 16-ը ներառյալ:

2. ***Անուշ Թադևոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Նունուֆար Համբարձումյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Նունուֆար Համբարձումյանին*** և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար ***Վազգեն Շուշանյանին*** *(համաձայնությամբ)* ապահովել «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Յանա Պետրոսյան (համաձայնությամբ))* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 363-Ա

ՎԱՐԴԻԹԵՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով *Վարդիթեր Ավետիսյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 29-ի № 32 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Վարդիթեր Ավետիսյանին*** տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 1-ից 14-ը ներառյալ:

2. ***Վարդիթեր Ավետիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Գոհար Մեյրանյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Գոհար Մեյրանյանին*** և «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Արայիկ Ոսկանյանին*** ապահովել «Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Արայիկ Ոսկանյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 364-Ա

ԳԱՅԱՆԵ ԳՈՐԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ի № 524-Ա որոշումը և *Գայանե Գորգյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի № 25 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ձորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Գայանե Գորգյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 5-ից 16-ը ներառյալ:

2. ***Գայանե Գորգյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ձորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Լյուդմիլա Խոցանյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
(ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 365-Ա

ՍՈՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով *Սոնա Աբրահամյանի*՝ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի № 29 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սոնա Աբրահամյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 5-ից 16-ը ներառյալ:

2. ***Սոնա Աբրահամյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Թամարա Նարիմանյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Թամարա Նարիմանյանին*** և «Արզականի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Արմենուհի Բաբաջանյանին*** ապահովել «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Արզականի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Արմենուհի Բաբաջանյանի)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 366-Ա

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Աննա Մուրադյանի* 2026 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճընի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող ***Աննա Մուրադյանին*** տրամադրել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ՝ 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2028 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ:

2. ***Աննա Մուրադյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճընի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Միմա Դավթյանի*** *(համաձայնությամբ)* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2026 թվականի № 367-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿՈՏԱՅՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի օգոստոսի 7-ի № 1074-Ա որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2026 թվականի սեպտեմբերի 24-ի № 01/10.8/6600-2026 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզային ենթակայության «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարման հանձնաժողովի կողմից կազմված լուծարման հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի
30-ի N 367-Ա որոշման

Ձև - 1

ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ 23 սեպտեմբերի 2026թ
ամիս ամսաթիվ

Կազմակերպության անվանումը վերականգնողական կենտրոն ՓԲԸ	ՀՈՏԱՅՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ" ՊՈՒԿ	ծածկագիրը
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները		
Պետական ռեգիստրում գրանցման համարը		33.210.01602
Հարկ վճարողի հաշվառման համարը		03008809
Չափի միավորը		հազար դրամ
Գտնվելու վայրը	հեռախոսը	
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ք. Հրազդան, Կենտրոն 49 դպրոց	հեռախոսը

ԱԿՏԻՎ	տող	Հաշվետու տարվա վերջին
1	2	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	10	
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	20	
Ոչ նյութական ակտիվներ	30	
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	40	
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	50	
Հետաձգված հարկային ակտիվներ	60	
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	70	
Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար	71	
Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով	72	
	73	
	74	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	80	0.0
II. Ընթացիկ ակտիվներ		
Նյութեր	90	
Աճեցվող և բտվող կենդանիներ	100	
Արագամաշ առարկաներ	110	
Անավարտ արտադրություն	120	
Արտադրանք	130	
Ապրանքներ	140	
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	
Այլ դեբիտորական պարտքեր	180	
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	
	212	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	0.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	0.0

ՊԱՍԻՎ	տող	Հաշվետու տարվա վերջին
1	2	4
III. Սեփական կապիտալ		
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	
Էմիսիոն եկամուտ	250	
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260	
Կուտակված շահույթ	270	
Պահուստային կապիտալ	280	
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290	
	291	
Ընդամենը սեփական կապիտալ	300	0.0
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	
Հետաձգված հարկային պարտավորություններ	320	
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330	
Ոչ ընթացիկ պահուստներ	340	
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350	
	351	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	0
V. Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	
Կարճաժամկետ փոխառություններ	380	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	440	
Այլ կրեդիտորական պարտքեր	450	
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460	
Ընթացիկ պահուստներ	470	
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480	
արհմիության վճար	481	
դրոշմանիշային վճարի գծքվ	482	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	0.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	0.0

Ղեկավար՝ լուծարման հանձնաժողովի նախագահ Ա. Հակոբջանյան

Անուն ազգանուն

կ.տ